Արձանագրություն 3

ՍՊԳՀԾՁԲ-19/39 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով միջոցառումների հետ կապված ծառայությունների գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

16.10.2019թ.
ժ.14:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմենուհի Պետրոսյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Մելանյա Բաղդասարյան /գնահատող/
Մարիանա Մինասյան /բացող/
Սուսաննա Ղազարյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

Բացակայում էր՝ Ռոզա Հակոբյան

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման մասին
(Ա. Պետրոսյան)

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության համաձայն «ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը չգերազանցող ժամկետանց պարտավորություններ:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերի 1-ին մասի 7.18 կետի 1-ին ենթակետով սահմանված կարգով պարտավորության վճարումը հիմնավորող փաստաթուղթը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

1.4 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ս/թ հոկտեմբերի 22-ին, ժամը՝ 10:30 -ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Ա. Պետրոսյան /նախագահ/
---------- Մ. Բաղդասարյան
---------- Մ. Մինասյան
---------- Ս. Ղազարյան
---------- Ա. Սողոմոնյան /քարտուղար/